Արձանագրության 3

Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցի թիվ 23 երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքի վերականգնման-ամրացման աշխատանքների (2-րդ փուլ) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

22.12.2017թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/,
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝ Ե. Կարապետյան /գնահատող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/13 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/13» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցի թիվ 23 երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքի վերականգնման-ամրացման աշխատանքների (2-րդ փուլ) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասնյոթ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան